



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

23 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 10

Ձեռնարկողը՝

«Դեմեր» ՍՊԸ

Կորայրի մարզ, Արամուս համայնք

Գործունեությունը՝

**Արամուսի բազալտի հանքավայրի «Դեմեր-1» տեղամասում
2019-2020 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Կորայրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
տնօրենի ժ/պ՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 10

« 05 » 03 2019թ.

**Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Դեմեր-1» տեղամասում
2019-2020 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«Դեմեր» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզի Արամուս համայնք

Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «Դեմեր» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցների հաշվին:

Արամուսի բազալտի հանքավայրի <<Դեմեր-1>> տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Արամուս համայնքում, համայնքից 1.5կմ դեպի հարավ-արևելք և զբաղեցնում է մոտ 8.0հա գյուղատնտեսական նշանակության վարելահողեր:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել տեղամասի բազալտների պիտանելիությունը երեսպատման և շինարարական քարի արտադրության համար՝ բավարարել 9479-2011 և 8267-93 ԳՈՍՍ-ի և 100-95 ՀՍՍ-ի տեխնիկական պահանջներին:

Նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 8.0հա մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ:

«Դեմեր» ՍՊ ընկերությունն Արամուսի բազալտի հանքավայրի «Դեմեր-1» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացնելու է հետևյալ մեթոդաբանությամբ և ծավալներով.

- հորատանցքերի հորատում, փաստագրում և նմուշարկում
- փորձնական բացահանքի անցում
- լաբորատոր ուսումնասիրություններ
- համախառը նմուշի վերցնում
- ռադիոմետրիական աշխատանքներ

120գծ.մ

250մ³

20 նմուշ

1 նմուշ



- հիդրոտերկրաբանական և ինժեներա-տերկրաբանական դիտարկումներ:

Նախատեսվում է հորատել թվով 6 հորատանցք, յուրաքանչյուրը մինչև 20մ խորությամբ, ընդամենը 120գծ.մ ծավալով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքի թագիկներով 112 և 93մմ տրամագծերով՝ ՈւԳԲ 1ՎԱ մակնիշի ինքնագնաց հաստոցով: Բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային նմուշարկման:

Մանրամասն տերկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերի հորատահանուկները և փորձնական հանույթի բացահանքը:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման նպատակով նախատեսվում է 1 փորձնական բացահանքի անցում՝ 250մ³ ծավալով, որից 50մ³ դեյուվիալ առաջացումներ և 200մ³ չհողմահարված թարմ ապարներ: Կկատարվի պիտանի բլոկների ելքի որոշում:

Թարմ բլոկներից երեսպատման սալիկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 5.0մ³ ծավալով կոպտամշակված տարբեր կարգերի բլոկներ:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերից, հորատահանուկից և փորձնական բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահանուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ) իրականացնել ընդհատվող տիրույթներով - 15 նմուշ,
- մենաքարի նմուշ բացահանքից - 1 հատ (20×20×20սմ),
- քիմիական կազմը որոշելու նպատակով - 3 նմուշ,
- քարաբանական կազմի ուսումնասիրություն - 2 նմուշ,
- համախառն նմուշ - 1 նմուշ՝ 100կգ զանգվածով:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Տեղամասի հիդրոտերկրաբանական և ինժեներատերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով հորատման ընթացքում նախատեսվում են համապատասխան դիտարկումներ, հաշվի առնելով տեղամասի հետագա շահագործման հնարավորությունը:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու են նաև ռադիոակտիվ տարրերի ուսումնասիրություններ:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները:

Նախատեսվում է 6 հորատման հարթակների կառուցում: Այդ աշխատանքների մակերեսը կկազմի՝ 240մ²:

Հորատման հարթակների կառուցման ժամանակ հողաբուսական շերտը նախատեսվում է հանել և կուտակել անմիջապես հորատման հարթակների հարևանությամբ: Աշխատանքների ավարտից հետո հողաբուսական շերտը վերականգնվելու է:

Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 0.2մ, ուստի՝ ընդհանուր վերականգնման ծավալը կկազմի 48խմ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:



Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Արամուս համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման, հաշվի է առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Ուսումնասիրության ընթացքում առաջացած աղբի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Դեմեր>> ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Դեմեր-1» տեղամասում 2019-2020թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ



Ա. Դոնոյան

Հ. Մետրոյան